# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԱՐՄԱՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱՃԱՀՃԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

ՄՈԴՈՒԼ



ԵՐԵՎԱՆ 2026

*Սույն մոդուլը պատրաստվել է «Աջակցություն Հայաստանի՝ Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի համաժողովի նախագահությանը և ներքին իրականացմանը» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի և «Ֆրիտյոֆ Նանսեն» ինստիտուտի հետ համագործակցությամբ, Նորվեգիայի զարգացման համագործակցության գործակալության աջակցությամբ:*

*Ծրագրի շրջանակում արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն «Ֆրիտյոֆ Նանսեն» ինստիտուտի տեսակետները:*

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մոդուլի նպատակն է 2026թ. հոկտեմբերի 19-30-ը Հայաստանում անցկացվելիք Միավորված Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովին ( CBD COP 17) ընդառաջ ներկայացնել ՀՀ հարուստ կենսաբազմազանությունը և կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման ոլորտում ՀՀ՝ միջազգային կոնվենցիաների և տեղական մակարդակի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքին վերաբերելի ՀՀ կենսաբազմազանության ազգային ծրագրով նախատեսված թիրախները, Արարատի կենսաբազմազանությունը, մարտահրավերները, հնարավոր լուծումները։

Մոդուլի մշակման համար օգտագործվել և ուսումնասիրվել են համապատասխան կոնվենցիաները, ՀՀ-ի կողմից Արարատ համայնքի տարածքից Բեռնի կոնցվենցիայի քարտուղարություն ներկայացվելիք էմերալդ թեկնածու տարածքների առաջարկները, ՀՀ շրջակա միջավայրի (այսուհետ՝ՇՄ) նախարարի 2026 թ. ապրիլի 3-ի թիվ 100-Լ հրամանը, ոլորտին առընչվող ՀՀ իրավական այլ ակտեր, պաշտոնական այլ աղբյուրներ։

## II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ CBD COP 17-Ը ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ

2026թ. հոկտեմբերի 19-30-ը Հայաստանը կհյուրընկալի[1] ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը (CBD COP 17)։

CBD COP17-ին Հայաստանում կքննարկվի շուրջ 50 փաստաթուղթ։ Կարևորագույն իրադարձությունը լինելու է Կունմին-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի իրականացման առաջին Գլոբալ վերանայումը (Global Review)։ Ակնկալվում է, որ CBD COP17-ը կվերածի այս վերանայման արդյունքները գործնական ուղեցույցների՝ մինչև 2030 թվականը գլոբալ հավակնությունների արագացված իրականացումն ապահովելու համար։ CBD COP17-ի չորս հիմնական առաջնահերթություններն են.

1. Գլոբալ վերանայում՝ իրականացման առաջընթաց և հաշվետվողականություն
2. Ֆինանսներ և թվային գենետիկական հաջորդականության տվյալներ՝ ֆինանսավորում, Կալի հիմնադրամ (Cali Fund) և օգուտների բաշխում
3. Մասնակիցներ՝ բնիկ ժողովուրդներ, համայնքներ և շահառուներ
4. Սիներգիա՝ կենսաբազմազանություն, կլիմա, հողեր, ջուր։

## III. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

[1] Decision adopted by the Conference of the Parties to the Convention on Biological Diversity on 1 November 2024 (https://www.cbd.int/doc/decisions/cop-16/cop-16-dec-27-en.pdf)

1.ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիան ընդունվել է 1992թ. մայիսի 22-ին՝ Նայրոբիում (Քենիա) և պաշտոնապես բացվել ստորագրման համար նույն թվականի հունիսի 5-ին՝ Ռիո դե Ժանեյրոյի «Երկիր» գագաթնաժողովում: Այն ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 29-ին:

Կոնվենցիայի նպատակներն են.

- կենսաբանական բազմազանության պահպանում
- կենսաբանական բազմազանության բաղադրիչների կայուն օգտագործում
- գենետիկական ռեսուրսների օգտագործումից բխող օգուտների արդար և հավասար բաշխում:

Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993թ: 2004թ. մարտի 16-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ վավերացվել է Կոնվենցիայի Կարթագենայի արձանագրությունը[2], որն ապահովում է գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների (ԳՄՕ) անվտանգ մշակումը, տեղափոխումը և օգտագործումը, որոնք կարող են ունենալ բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը վերաբերող ռիսկերը:

2026 թ. մարտի 25-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Կոնվենցիայի Նագոյայի արձանագրությունը, որն ապահովում է գենետիկական ռեսուրսների օգտագործումից առաջացող օգուտների արդար և հավասար բաշխումը[3]:

2022թ. դեկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 15-րդ համաժողովի ժամանակ ընդունվեց Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակը (այսուհետ՝ ԿՄԿ): Այն ներառում է 4 նպատակ 2050թ. համար և 23 թիրախ 2030թ. համար:
Նպատակներն են՝
1) Պաշտպանել և վերականգնել
2) Բարգավաճել բնության հետ ներդաշնակ
3) Արդարացիորեն բաշխել օգուտները
4) Ներդնել և համագործակցել:
Շրջանակի 23 թիրախներից 1-8-ն ուղղված են կենսաբազմազանության համար սպառնալիքների կրճատմանը, 9-13-ը՝ մարդկանց կարիքների բավարարմանը կենսաբազմազանության կայուն օգտագործման և օգուտների բաշխման միջոցով, 14-23-ն ուղղված են իրականացման և ներդրման համար գործիքներին և լուծումներին: Այն ուղենշային համաձայնագիր է, որը սահմանում է նպատակներ և կոնկրետ գործողություններ՝ մինչև 2050 թ. դադարեցնելու կենսաբազմազանության կորուստը: Շրջանակի թիրախները ներառում են էկոհամակարգերի 30 տոկոսի վերականգնում, ցամաքի, ջրերի և ծովերի 30%-ի պահպանություն, ինվազիվ օտար տեսակների՝ ներմուծման նվազեցում մինչև 50% :

**2.«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին»** կոնվենցիան (Բեռնի կոնվենցիա) ընդունվել է 1979 թ. սեպտեմբերի 19-ին Շվեյցարիայի Բեռն քաղաքում: Կոնվենցիայի նպատակն է ապահովել վայրի ֆլորայի ու ֆաունայի և

[2] https://www.arlis.am/hy/acts/4179
[3] https://www.arlis.am/hy/acts/223685

նրանց բնական միջավայրերի պահպանությունը՝ առանձնակիորեն կարևորելով այն տեսակները և բնական միջավայրերը, որոնց պահպանման համար անհրաժեշտ է համագործակցություն մի քանի պետությունների կողմից, ինչպես նաև խթանել նման համագործակցությունը:

Հայաստանը Կոնվենցիան վավերացրել է 2008թ. ապրիլի 14-ին, որը ուժի մեջ է մտել 2008թ. օգոստոսի 1-ից[4]:

Հայաստանը ներգրավված է Կոնվենցիայի կարևոր գործիքներից մեկում՝ Էմերալդ ցանցում, որի նպատակներից մեկն է առանձնացնել և պահպանել կենսաբազմազանության համար արժեքավոր տարածքները: Հայաստանը ներկայացրել է 23 Էմերալդ թեկնածու տարածք, որոնք ընդգրկել են 1.033.719,5 հա, կամ երկրի տարածքի 34,7%-ը: Մի քանի տարի է՝ տեղի է ունենում այդ տարածքների վերանայման գործընթաց: «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի (EU4Environment) ծրագրի» շրջանակում Համաշխարհային բանկը պատրաստել է «Հայաստանում Էմերալդ ցանցի թեկնածու տարածքների վերանայման առաջարկություններ», ըստ որոնց՝ առաջարկվում է 30 թեկնածու տարածք 23-ի փոխարեն, որոնց ընդհանուր տարածքը կկազմի 707,739.22 հեկտար կամ երկրի 23.8%-ը[5]:

**3. «Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիա»-ն** (Բոննի կոնվենցիա) ընդունվել է 1979թ. հունիսի 23-ին Գերմանիայի Բոնն քաղաքում: Այն ուժի մեջ է 1983 թ-ից:

Կոնվենցիայի նպատակն է պահպանել միգրացվող վայրի կենդանիները, նրանց կենսամիջավայրերը և միգրացիոն ուղիներն ամբողջ աշխարհում: Այն գործում է ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) հովանու ներքո և կենսաբազմազանության պահպանության գլոբալ համակարգի կարևոր բաղադրիչ է:

Հայաստանն այս Կոնվենցիային միացել 2006թ.: Այն ուժի մեջ է մտել 01.03.2011թ-ից:

**4. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր»** կոնվենցիան (Ռամսարի կոնվենցիա)[6] ընդունվել է 1971թ.:

Կոնվենցիան ջրաճահճային տարածքների պահպանությանը նվիրված առաջին համաշխարհային բնապահպանական համաձայնագիրն է: Դրա հիմնական նպատակն է ջրաճահճային տարածքների պահպանությունն ու «խելամիտ օգտագործումը» (wise use)՝ կենսաբազմազանության և մարդկային բարեկեցության համար: ՀՀ-ն կոնվենցիային միացել է 1993թ.: ՀՀ-ում ներկայում միջազգային նշանակության Ռամսարյան տարածք են ճանաչվել ԵՒանա և Արփի լճերը, Խոր Վիրապի ճահճուտները:

---

[4] https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=signatures-by-treaty&treatynum=104

[5] https://www.eu4environment.org/app/uploads/2024/10/Recommendations-for-Review-of-the-Candidate-Emerald-Sites-in-Armenia-ARM.pdf

[6] https://www.unesco.org/en/legal-affairs/convention-wetlands-international-importance-especially-waterfowl-habitat

## IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԲԱՑԻ ՎՏԱՆԳՎԱԾ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի տարածքը մոտ 3800 տեսակի անոթավոր բույսի, 4200 տեսակի սնկի, 685 տեսակի քարաքոսի, 428 տեսակի ջրիմուռի, 399 տեսակի մամուռի աճելավայր է: Հայաստանի կենդանական աշխարհը ներառում է շուրջ 17000-17500 կենդանի օրգանիզմ, որոնցից 83 տեսակի կաթնասուն, 353 տեսակի թռչուն, 53 տեսակի սողուն, 8 տեսակի երկկենցաղ, 39 ձկնատեսակ և ավելի քան 11000 անողնաշարավոր կենդանատեսակ:

Կլիմայական պայմանները և բազմատեսակ լանդշաֆտները նպաստել են բարձր աստիճանի էնդեմիզմ ունեցող հարուստ կենսաբազմազանության առաջացմանը:

Հայաստանը, լինելով Կովկասի տարածաշրջանի մաս, ճանաչված է որպես աշխարհի կենսաբազմազանության 36 թեժ կետերից մեկը:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ 452 բուսատեսակ, 40 սնկատեսակ, 155 ողնաշարավոր կենդանի և 153 անողնաշարավոր կենդանատեսակ:

Աշխարհում շարունակվող և արձանագրվող կենսաբազմազանության կորատից, անմասն չէ նաև ՀՀ-ն: Հանքարդյունաբերության և այլ ծանր արդյունաբերության տեսակների համար կառուցվող խոշոր ենթակառուցվածքները, հիդրոէներգետիկան, անտառհատումները, անտառային հրդեհները, գյուղատնտեսությունը, այդ թվում՝ արոտավայրերի չկարգավարված արածեցումը, ռեկրեացիան և զբոսաշրջությունը, կենցաղային և շինարարական թափոններով տարածքների աղտոտումը, վայրի ուտելի բուսատեսակների չկարգավորված հավաքչությունը, վայրի կենդանիների և թռչունների ապօրինի որսը, հիվանդություններն ու վարակները, ինվազիվ կենսատեսակների տարածումը, կլիմայի փոփոխությունն իրենց բացասական հետևանքն են թողնում կենսաբազմազանության վրա՝ կրճատելով նրանց թվաքանակը և փոխելով նրանց տեսակային կազմը:

## V. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԱՐՄԱՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՏԱՐԱԾՔԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶՆՈՒԹՅՈՒՆԸ

Արարատ համայնքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի հարավային մասում: Հարավային ուղղությամբ համայնքի մի շարք բնակավայրեր սահմանամերձ են: Համայնքի տարածքը ընդգրկում է Արարատյան դաշտի հարավային հատվածը և դեպի հարավ-արևելք ձգվող նախալեռնային ու լեռնային տարածքներ: Դրա շնորհիվ համայնքի բնական պայմանները բավականին բազմազան են՝ հարթավայրային գյուղատնտեսական տարածքներից մինչև չոր տափաստանային և լեռնային գոտիներ:

Համայնքի վարչական տարածքը 48 876,58 հա. է:

Արարատ համայնքի կազմում ընդգրկված է 12 բնակավայր՝ Արարատ քաղաք՝ համայնքի կենտրոն և Ավշար, Նոյակերտ, Արարատ գյուղ, Սուրենավան, Արմաշ, Երասխ, Պարույր Սևակ, Զանգակատուն, Վարդաշատ, Լանջառ, Ուրցալանջ գյուղերը:

Համայնքի բնակչությունը՝ 2025 թ դրությամբ կազմում է 43 487 մարդ:

Արարատ քաղաքում զարգացած են ցեմենտի արտադրությունը, կրաքարի և այլ ոչ մետաղական հանքային հումքի վերամշակումը, արդյունաբերական

արտադրությունը, ընդերքօգտագործման գործունեությունը:

Գյուղական բնակավայրերում էական նշանակություն ունի գյուղատնտեսությունը՝ խաղողագործություն, պտղաբուծություն, բանջարաբուծություն, հացահատիկային մշակաբույսերի արտադրություն, անասնապահություն, խոտհարքների և արոտավայրերի օգտագործում:

## Համայնքի բուսական աշխարհը

Արարատ համայնքի բուսականությունը պայմանավորված է հիմնականում չոր և շոգ կլիմայով, Արարատյան դաշտի հողային պայմաններով և բարձրության փոփոխությամբ: Համայնքի հարթավայրային հատվածներում բնական բուսականությունը մեծապես փոխարինվել է գյուղատնտեսական մշակաբույսերով: Չմշակված և կիսաբնական տարածքներում հանդիպում են չոր տափաստանային, կիսաանապատային և աղասեր բուսականության տարրեր: Բարձրադիր հատվածներում բուսական ծածկույթը փոխվում է՝ անցնելով լեռնատափաստանային բուսականության: Հատկապես կարևոր է Արաքսի հովտի, Արմաշի և հարակից խոնավ տարածքների նշանակությունը կենսաբազմազանության պահպանության համար: Այս տարածքները կարևոր են նաև չվող և ջրային թռչունների համար:

## Համայնքի կենդանական աշխարհը

Համայնքի կենդանական աշխարհը նույնպես գոտիական բնույթ ունի: Արարատյան դաշտի գյուղատնտեսական և կիսաանապատային տարածքներում հանդիպում են աղվես, նապաստակ, ոզնի, կրծողներ, սողուններ, երկկենցաղներ, դաշտային և տափաստանային թռչուններ: Արմաշի և Արաքսի հովտի ջրաճահճային տարածքներում հանդիպում են ինչպես մշտական, այնպես էլ սեզոնային և չվող ջրային թռչուններ:

Համայնքի հարավային և հարավ-արևելյան՝ ավելի բարձրադիր հատվածներում կենդանական աշխարհը համալրվում է լեռնատափաստանային գոտուն բնորոշ տեսակներով: Այս տարածքների պահպանությունը կարևոր է նաև կենդանիների տեղաշարժի և էկոլոգիական միջանցքների տեսանկյունից:

Արմաշ գյուղը Արարատի մարզի Արարատ համայնքի կազմում է, ծովի մակարդակից 830 մ բարձրության վրա, բնակավայրի տարածքի մակերեսը 17,2 կմ² է: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Բնակչության թիվը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2673 մարդ: Գյուղի բնակչությունը զբաղվում է բուսաբուծությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Բնակավայրի վարչական տարածքի լճակների համալիրում գործում են մի շարք ձկնաբուծական տնտեսություններ:

Արմաշի մոտ 6000 հեկտար ջրատարածքները գտնվում են Հայաստանի Արարատյան դաշտի կենտրոնում՝ Արաքս գետի հովտում, Թուրքիայի և Նախիջևանի սահմանների հարևանությամբ: Տարածքները կարևոր նշանակություն ունեն միգրացիոն թռչունների, ջրաճահճային բուսականության և ջրային էկոհամակարգերի պահպանության համար: Տարածքի ձկնաբուծական լճակները, եղեգնուտները,

ծանծաղ ջրավազանները և ճահճային տարածքները դարձել են հազարավոր միգրացիոն թռչունների հանգստի և բնադրման վայր:

Այստեղ բնակվում են ավելի քան 230-250 տեսակի թռչուններ, այդ թվում՝ Վարդագույն ֆլամինգոն/*Phoenicopterus roseus*, Գանգրահեր հավալուսնը/*Pelecanus crispus*, Սպիտակ հավալուսնը/*Pelecanus onocrotalus*, Սև արագիլը/*Ciconia nigra,* Փայլուն իբիսը/*Plegadis falcinellus*, Մարմարե բադը/*Marmaronetta angustirostris*, Սպիտակագլուխ բադը/*Oxyura leucocephala*, Սպիտակապոչ տատրակը/*Vanellus leucurus*, Մանուշակագույն տառեղը/*Ardea purpurea* ,Սպիտակաթև ջրածիծեռնակը/*hlidonias leucopterus*:

Այստեղ է գտնվում անհետացման եզրին գտնվող՝ NABU-ի թռչնի՝ սպիտակ արագիլի ամենամեծ պոպուլյացիաներից մեկը[7]: Թռչունների շուրջ 90 տոկոսը բնադրում են տարածքում: Տարածքում տարածված են՝ եղեգը/(Phragmites australis, կեռոն/Typha spp., ջրիմուռների և ջրային բույսերի բազմազան համակեցություններ, աղուտային և կիսաանապատային բուսականություն:

Արմաշի տարածքը լիովին համապատասխանում է «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» (Ռամսար 1971թ կոնվենցիայի[8] բոլոր չափորոշիչներին: Այն Հայաստանի ամենակարևոր հարթավայրային ջրաճահճային կենսամիջավայրերից է: Այն կարևոր է միջազգային պահպանական ցանցերի (Էմերալդ, KBA, IBA) տեսանկյունից, թեև այն դեռևս ընդգրկված չէ Ռամսարի ցանկում:

Հաշվի առնելով կենսաբազմազանության առումով տարածքի կարևորությունը՝ ՀՀ-ն 2016 թվականին Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն ներկայացրեց Հայաստանում «Էմերալդ ցանցի» թեկնածու տարածքների ցանկը: Ի թիվս հայտում ներառված 23 պոտենցիալ տարածքների, այն ներառում էր նաև Արմաշի տարածքը՝ որպես «Խոր Վիրապ» (AM0000003) Էմերալդ տարածքի մաս:[9] Հետագայում, «EU4Environment» ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների համաձայն՝[10] քննարկվում է (AM0000025) «Արմաշ» տարածք 5,902.58 հա մակերեսով, ձկների 4, սողունների 2, թռչունների 80 և կաթնասունների 8 տեսակներով տարբերակը, որի վերաբերյալ վերջնական որոշումից հետո այն հաստատման կներկայացվի Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն:

ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 860 - Ն որոշմամբ [11] սահմանված ցանկում Արմաշի տարածքը ներառված է որպես գայիլ, շնագայլի, աղվեսի, գորշուկի, քարակզաքիսի, նապաստակի, վայրի խոզի, քարակաքավի, լորի, մեղվակերի, աղավնիների, կտցարների, սև կեռնեխի, դաշտային և տափաստանային արտույտների, ջրլող թռչունների որսահանդակ:

---

[7] https://nabu.am/sites/default/files/%D4%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AC%D5%AB%20%D5%A2%D6%80%D5%B8%D5%B7%D5%B5%D5%B8%D6%82%D6%80.pdf

[8] https://www.unesco.org/en/legal-affairs/convention-wetlands-international-importance-especially-waterfowl-habitat

[9] https://www.eu4environment.org/app/uploads/2024/11/Pilot-Management-Plan-of-Emerald-Site-Armash-AM0000025-in-Armenia-ARM.pdf

[10] https://www.eu4environment.org/app/uploads/2024/10/Recommendations-for-Review-of-the-Candidate-Emerald-Sites-in-Armenia-ARM.pdf

[11] https://arlis.am/hy/acts/135650/latest

ՀՀ ՇՄ նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. տեղեկագրի համաձայն՝ Արարատ քաղաքից ներքև մակերևութային ջրերի որակը «վատ» (5-րդ դաս)-ի է՝ պայմանավորված ամոնիում իոնով[12]: Նույն աղբյուրում նշվում է, որ 2023 թվականի հետ համեմատած Արմաշի N2075 դիտակետերում 2024թ. դիտվել է գրունտային ջրերի մակարդակների իջեցումներ 15-ից 37 սմ սահմաններում, իսկ Սուրենավանի N2067 դիտակետի ջուրը կարելի է դասել հանքային ջրերի շարքին:

Տարածքում առկա է ձկնաբուծարանների խիտ ցանց, որտեղ բուծվող ձկները, ձկների կերի հումքը վայրի թռչնատեսակներն օգտագործում են որպես սննդի աղբյուր,: Թռչնատեսակների համար ռիսկերից է ձկնաբուծարանների աշխատակիցների կողմից դրանց հեռացնելը:

Արմաշի ուղղությամբ գտնվող տարածաշրջանի ջրային մարմինների համար լուրջ մարտահրավեր է Արարատի ոսկու վերամշակման գործարանի և պոչամբարի արտահոսքերից ծանր մետաղներով աղտոտման ռիսկը: Ի լրումն գործող պոչամբարի 2026թ. մարտի 13-ին Արարատ համայնքի ավագանին նախնական համաձայնություն է տվել տվել «ԳՊՄ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչերի վերամշակման և պոչամբարի նոր բջջի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքներին[13]:

Արարատի ցեմենտի գործարանից արտանետվող փոշին, նստելով բույսերի վրա, լուծվելով ստորգետնյա ջրային մարմիններում, առաջ է բերում բուսական կենսատեսակների նյութափոխանակության խաթարում:

## VI. ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԱՐՄԱՇԻ ՋՐԱՃԱՀՃԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ ՀՀ ՇՄ ՆԱԽԱՐԱՐԻ 2026Թ. ԱՊՐԻԼԻ 3-Ի N 100-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ[14]

«ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության նպատակները և 2026-2030 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» հրամանով հաստատված Ծրագրում ջրաճահճային տարածքներին անդրադարձը ընդամենը մեկ կետով է որն է՝ իրականացնել առնվազն 1000 հեկտար դեգրադացված ջրաճահճային էկոհամակարգերի վերականգնման աշխատանքներ:

**Ծրագրում չկա անդրադարձ կոնկրետ Արմաշի ջրաճահճային տարածքների պաշտպանության, կերահանդակների ընդլայնման, որսահանդակների և որսորդության տնտեսության կառավարման, ջրային ռեսուրսների կայուն օգտագործման, աղտոտման կանխարգելման կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների: Հարցադրումները կրում են ընդհանուր բնույթ:**

Ծրագրով սահմանված 30 թիրախներից Արարատ համայնքին, ներառյալ Արմաշի ջրաճահճային տարածքի պահպանմանը վերաբերելի են հետևյալ թիրախները՝

[12] https://new.meteomonitoring.am/file/globalFiles/water-report-2024.pdf

[13] https://www.ecolur.org/hy/news/waste/16319/

[14] https://cms.environment.gov.am/assets/aec1869b-4354-4df9-9d8e-3eff8998a526

- **Թիրախ1.** ներառել կրիտիկական կենսամիջավայրերը տարածական պլանավորման մեջ
- **Թիրախ 3**. ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների ցանցը, այդ թվում տարածքային բնապահպանական այլ արդյունավետ գործիքակազմերի կիրառման միջոցով
- **Թիրախ11**.ներդնել կայուն որսորդության փորձառություններ (պրակտիկաներ)
- **Թիրախ13.** կիրառել բնահեն լուծումներ
- **Թիրախ 16.** բարձրացնել կենսաբազմազանության պահպության կարևորությունն ու նշանակությունը տեղականից մինչև պետական մակարդակներում
- **Թիրախ 25**. զարգացնել կենսաբազմազանության ոլորտի հետազոտությունները (այդ թվում կարողությունները) և տեխնիկական համագործակցությունը
- **Թիրախ 26.** ամրապնդել կենսաբազմազանության գույքագրումն ու մշտադիտարկումը
- **Թիրախ 28**. խրախուսել հանրության մասնակցությունը կենսաբազմազանության վերաբերյալ հետազոտություններում և բարձրացնել բնապահպանական իրազեկվածության մակարդակը
- **Թիրախ 29.** ներգրավել համայնքներին բնապահպանական կառավարման մեջ
- **Թիրախ 30**.Կենսաբազմազանության պահպանման ոլորտում ապահովել գենդերային հավասարությունը

## VII. ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

1. Կլիմայի փոփոխության պայմաններում ջրի և գյուղատնտեսության նկատմամբ աճող ռիսկերի կառավարում
2. Արաքսի հովտի և խոնավ տարածքների կենսաբազմազանության պահպանում
3. Հողերի դեգրադացում և անապատացում
4. Վայրի կենդանիների ապօրինի որս և ձկնորսություն, ինչպես նաև դրանց կանոների չպահպանում։
5. Տարածքի՝ որսատեղի լինելու հանգամանք։
6. Համայնքում կոմունալ-կենցաղային ջրերի մաքրման կայանի բացակայություն։
7. Մակերևութային և ստորերկրյա ջրային ավազանի աղտոտվածություն (Արարատի ոսկու կորզման ֆաբրկայի արտադրական ջրեր, ցիանական պոչամբարից ներհոսք մակերևութային և ստորերկրյա ջրային մարմիններ, համայնքում կոմունալ-կենցաղային ջրերի մաքրման կայանի բացակայությամբ պայմանավորված կեղտաջրերի արտահոսք)։
8. Ձկնաբուծական տնտեսությունների խիտ ցանց (ջրային ռեսուրսների գերշահագործում, հողային ռեսուրսների կրճատում, վայրի թռչունների ոչնչացում)։
9. Ընտանի կենդանիների անվերահսկելի արածեցում։

10. Եղեգնուտների հաճախակի այրումներ (Տարածքները «մաքրելու» նպատակով կատարվող զանգվածային այրումների հետևանքով ոչնչանում են կենդանիների և թռչունների կենսամիջավայրերը):
11. Տարածքի բնակավայրերի կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների բացակայություն, ինչպես նաև այլ արտադրություններից արտահոսվող արտադրական կեղտաջրերով աղտոտում:
12. Մթնոլորտային օդի աղտոտվածության բարձր մակարդակ:
13. Արմաշի ջրաճահճային տարածքի պահպանության հատուկ կարգավիճակի բացակայություն:

## VIII. ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Մշակել գործողությունների ծրագիր Արարատ համայնքի կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար
2. Գործողությունների ծրագիր ներկայացնել ՇՄՆ-ին՝ դրա իրականացմամբ նպաստելով երկրի ստանձնած պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև ծրագրի իրականացման համար մասնագիտական և դոնոր կազմակեպություններից ֆինանսական աջակցություն ակնկալիքով
3. Համայնքի զարգացման ծրագրերը կազմելիս ձեռնպահ մնալ համայնքում առկա կրիտիկական կենսամիջավայրերի ներառումից
4. Համայնքի զարգացման ծրագրերում նախատեսել դեգրադացված հողատարածքների վերականգնման միջոցառումներ
5. Քաղաքաշինության, տարածական պլանավորման և տնտեսական գործունեության զարգացման ժամանակ հաշվի առնել կենսաբազմազանությամբ հարուստ տարածքների պահպանության անհրաժեշտության բաղադրիչը
6. Գյուղատնտեսության ոլորտում խուսափել թունաքիմիկատների և պեստիցիդների կիրառումից
7. Խրախուսել բնակավայրերում թափոնների նախնական տեսակավորմանը, սննդային թափոնների կրճատմանն ուղղված նախաձեռնությունները
8. Խրախուսել համայնքում վայրի կենսաբազմազանության տեսակների վրա հիմնված կայուն գործունեությունների, արտադրանքների և ծառայությունների զարգացումը՝ առաջնություն տալով ավանդական կայուն օգտագործման ձևերին
9. Խթանել համայնքի բնակավայրերի կանաչ զարգացումը
10. Մշակել ջրաճահճային տարածքների կառավարման ծրագրեր և իրականցնել այն
11. Ձեռնարկել համայնքում առկա եղեգնուտների հրդեհման կանխարգելիչ միջոցառումներ
12. Համայնքի բնակավայրերում պարբերաբար անցկացնել կենսաբազմազանության վերաբերյալ գիտելիքների իրազեկման աշխատանքներ
13. Կենսառեսուրսների վերաբերալ որոշոմների կայացման գործընթացում ապահովել համայնքի լիարժեք, արդար, ներառական, արդյունավետ և գենդերային արձագանքող ներկայացվածություն ու մասնակցություն
14. Համայնքի տարածքում շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա գործունեության նպատակով անցկացվող հասարակական լսումների

գործընթացում որոշումներ կայացնելիս առաջնորդվել բացառապես համայնքի իրավունքների և բնության պաշտպանության շահերից
15. Համայնքային մակարդակում անցկացնել տարածքի կենսաբազմազանության մոնիթորինգ
16. Խորացնել համագործակցությունը ձկնաբուծական տնտեսությունների և ՀՀ ՇՄ նախարարության ու միջազգային, ինչպես նաև հանրապետական ծրագրերի բնապահպանական բաղադրիչների շրջանակներում
17. Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչամբարից արտահոսքերի և ստորերկրյա ջրերի աղտոտման ռիսկերի բացառման նպատակով դիմել ՀՀ ՇՄ նախարարություն՝ ֆաբրիկայի կողմից ինքնահսկման համակարգի կատարելագործման պահանջով
18. Արարատի ցեմենտի գործարանից մթնոլորտային օդ արտանետումների կանխարգելման նպատակով ինքնահսկման մեխանիզմների ներդրման պահանջով դիմել ՀՀ ՇՄ նախարարություն
19. Խորացնել համագործակցությունը տարածքային էկոպարեկային կառույցի հետ բնության հատուկ պահպանվող տարածքներում կենսատեսակների մոնիթորինգին և դրանց նկատմամբ վերահսկողության ուժեղացման համար
20. Ջրային ոլորտի լիազորված մարմինների քաղաքականության շրջանակներում նախատեսել տարածքային կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում ու դրա կիրարկում: